

Կ-032⁷-28.02.2019, 15.04.2019-ՊԻ-011

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ
«ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

ՀՈՂՎԱԾ 1. «Ոստիկանության մասին» 2001 թվականի ապրիլի 16-ի ՀՕ-177 օրենքը (այսուհետ՝ Օրենք) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 3.1 հոդվածով՝

«Հոդված 3.1 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՂԱՆԻՇԵՐԸ

1. Հայաստանի Հանրապետության ոստիկանության խորհրդանիշերն են **դրոշը և զինանշանը**:

2. Դրոշի եւ զինանշանի մասին կանոնադրությունը, ինչպես նաեւ դրանց նկարագրությունը հաստատվում են Հայաստանի Հանրապետության վարչապետի կողմից:»:

ՀՈՂՎԱԾ 2. Օրենքի 5-րդ հոդվածում՝

1) 5-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ.

«Մարդու իրավունքների ու ազատությունների սահմանափակումից բխող իրավունքների բանավոր ծանուցման մասին արձանագրության և մարդու՝ ազատությունից զրկման հետ կապված իրավունքների մասին գրավոր ծանուցման ձեւերը հաստատում է Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետը:».

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 9-րդ մաս.

Ոստիկանության կողմից վարվող էլեկտրոնային շտեմարաններից պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններին, **ինչպես նաև իրավաբանական անձանց անձնական տվյալներ** փոխանցվում են օրենքով ուղղակի նախատեսված դեպքերում: Ոստիկանությունն ապահովում է էլեկտրոնային շտեմարանների հասանելիությունը քրեական հետապնդում իրականացնող մարմինների համար՝ իրենց լիազորությունների շրջանակում տեղեկատվությունն օգտագործելու նպատակով, բացառությամբ **պետական կամ ծառայողական գաղտնիք** պարունակող տեղեկություններ պարունակող շտեմարանների, որոնցում ներառված տեղեկությունները կարող են տրամադրվել «Պետական եւ ծառայողական գաղտնիքի մասին» օրենքով նախատեսված դեպքերում և կարգով:»:

ՀՈՂՎԱԾ 3. Օրենքի 12-րդ հոդվածում լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 3-րդ մաս.

«Ոստիկանության համայնքային ոստիկանության գործունեության կազմակերպման կարգը, պարեկապահակետային ծառայության կանոնագիրքը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:»:

ՀՈՂՎԱԾ 4. Օրենքի 15-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 2-րդ եւ 3-րդ մասերով.

«Ոստիկանության կողմից պետական պահպանության ենթակա պետական մարմինների եւ կազմակերպությունների շենքերի ու շինությունների, ինչպես նաեւ կարելուրագույն նշանակության օբյեկտների ցանկերը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Ոստիկանության՝ պետական պահպանության գործառույթ իրականացնող ծառայության ռազմականացված ստորաբաժանումների ծառայության կարգը սահմանվում է ոստիկանության պետի կողմից:»:

ՀՈՂԱԾ 5. Օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի՝

1) «ա» ենթակետում «հետախուզական» բառից հետո լրացնել «աշխատանքներ» բառը,

2) «գ» ենթակետում «ուղեկցում» բառից հետո լրացնել «եւ պահպանում՝ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով» բառերը:

ՀՈՂԱԾ 6. Օրենքի 18-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 2-րդ մասով.

«Հայաստանի Հանրապետությունում անձնագրային համակարգի կանոնադրությունը եւ Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի նկարագիրը (ծելը) հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:»:

ՀՈՂԱԾ 7. Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 4-րդ կետով.

«4) ստեղծել եւ վարել Հայաստանի Հանրապետությունում շրջանառվող փաստաթղթերի նմուշօրինակների միասնական հավաքածու: Հայաստանի Հանրապետությունում շրջանառվող փաստաթղթերի նմուշօրինակների միասնական հավաքածու ստեղծելու, դրա կազմավորման եւ վարման կարգը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:»:

ՀՈՂԱԾ 8. Օրենքի 32-րդ հոդվածի 5-րդ մասը 1-ին նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Ոստիկանության սպառազինության մեջ ընդգրկված հրազենի, հրազենի պահեստամասերի, սարքավորումների, օժանդակ միջոցների եւ ռազմամթերքի տեսակների ցանկը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:»:

ՀՈՂԱԾ 9. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՏԵՂԵԿԱՆՔ
«ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾՈՒՄ 1-ԻՆ ԸՆԹԵՐՑՈՒՄԻՑ ՀԵՏՈ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ
«ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՈՂՎԱԾ 1. «Ոստիկանության մասին» 2001 թվականի ապրիլի 16-ի ՀՕ-177 օրենքը (այսուհետ՝ Օրենք) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 3.1 հոդվածով՝

«Հոդված 3.1 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՂԱՆԻՇԵՐԸ

1. Հայաստանի Հանրապետության ոստիկանության խորհրդանիշերն են ~~դրոշը, զինանշանը և օրհներգը~~ **դրոշը և զինանշանը**։

2. Դրոշի եւ զինանշանի մասին կանոնադրությունը, ինչպես նաեւ դրանց նկարագրությունը հաստատվում են Հայաստանի Հանրապետության վարչապետի կողմից»։

ՀՈՂՎԱԾ 2. Օրենքի 5-րդ հոդվածում՝

1) 5-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ.

«Մարդու իրավունքների ու ազատությունների սահմանափակումից բխող իրավունքների բանավոր ծանուցման մասին արձանագրության և մարդու՝ ազատությունից զրկման հետ կապված իրավունքների մասին գրավոր ծանուցման ձեւերը հաստատում է Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետը»։

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 9-րդ մաս.

Ոստիկանության կողմից վարվող էլեկտրոնային շտեմարաններից պետական ~~կառավարման~~ եւ տեղական ինքնակառավարման մարմիններին, **ինչպես նաև իրավաբանական անձանց անձնական տվյալներ տեղեկություններ** փոխանցվում են օրենքով ուղղակի նախատեսված դեպքերում։ Ոստիկանությունն ապահովում է էլեկտրոնային շտեմարանների հասանելիությունը քրեական հետապնդում իրականացնող մարմինների համար՝ իրենց լիազորությունների շրջանակում տեղեկատվությունն օգտագործելու նպատակով, բացառությամբ պետական կամ ծառայողական գաղտնիք պարունակող տեղեկություններ պարունակող շտեմարանների, որոնցում ներառված տեղեկությունները կարող են տրամադրվել «Պետական եւ ծառայողական գաղտնիքի մասին» օրենքով նախատեսված դեպքերում և կարգով»։

ՀՈՂՎԱԾ 3. Օրենքի 12-րդ հոդվածում լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 3-րդ մաս.

«Ոստիկանության համայնքային ոստիկանության գործունեության կազմակերպման կարգը, պարեկապահակետային ծառայության կանոնագիրքը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը»։

ՀՈՂՎԱԾ 4. Օրենքի 15-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 2-րդ եւ 3-րդ մասերով.

«Ոստիկանության կողմից պետական պահպանության ենթակա պետական մարմինների եւ կազմակերպությունների շենքերի ու շինությունների, ինչպես նաեւ կարելորագույն նշանակության օբյեկտների ցանկերը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը։

Ոստիկանության՝ պետական պահպանության գործառույթ իրականացնող ծառայության ռազմականացված ստորաբաժանումների ծառայության կարգը սահմանվում է ոստիկանության պետի կողմից:»:

Հոդված 5. Օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի՝

1) «ա» ենթակետում «հետախուզական» բառից հետո լրացնել «աշխատանքներ» բառը,

2) «գ» ենթակետում «ուղեկցում» բառից հետո լրացնել «եւ պահպանում՝ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով» բառերը:

Հոդված 6. Օրենքի 18-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 2-րդ մասով.

«Հայաստանի Հանրապետությունում անձնագրային համակարգի կանոնադրությունը եւ Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի նկարագիրը (ծելը) հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:»:

Հոդված 7. Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 4-րդ կետով.

«4) ստեղծել եւ վարել Հայաստանի Հանրապետությունում շրջանառվող փաստաթղթերի նմուշօրինակների միասնական հավաքածու: Հայաստանի Հանրապետությունում շրջանառվող փաստաթղթերի նմուշօրինակների միասնական հավաքածու ստեղծելու, դրա կազմավորման եւ վարման կարգը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:»:

Հոդված 8. Օրենքի 32-րդ հոդվածի 5-րդ մասը 1-ին նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Ոստիկանության սպառազինության մեջ ընդգրկված հրազենի, հրազենի պահեստամասերի, սարքավորումների, օժանդակ միջոցների եւ ռազմամթերքի տեսակների ցանկը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:»:

Հոդված 9. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ (4-032²-28.02.2019-ՊԻ-011/1, 4-032⁷-28.02.2019, 15.04.2019-ՊԻ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑԱԾ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկությունները ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	<i>ՀՀ կառավարություն</i>		«Բնակչության պետական ռեգիստրի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագիծը հանել փաթեթից՝ ՀՀ վարչապետի աշխատակազմի ղեկավարի մոտ «Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ» ՓԲԸ-ի տնօրենի մասնակցությամբ տեղի ունեցած քննարկման ընթացքում ձեռք բերված պայմանավորվածության համաձայն: Մասնավորապես, քննարկման արդյունքում որոշվեց, որ Ոստիկանության կողմից վարվող շտեմարաններից անձնական տվյալներ պարունակող տեղեկությունները պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին կփոխանցվեն առանձին օրենքներով ուղղակիորեն նախատեսված դեպքերում:	Ընդունվել է: «Բնակչության պետական ռեգիստրի մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» օրինագիծը (<u>4-032²-28.02.2019-ՊԻ-011/1</u>) հանվել է փաթեթից:	
2.	<i>ՀՀ կառավարություն</i>	Հոդված 1.	«Ոստիկանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածով լրացվող նոր՝ 3.1. հոդվածի 1-ին մասում «դրոշմ, զինանշանը և օրհներգը» բառերը փոխարինել «դրոշմ և զինանշանը» բառերով:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	

		Հոդված 2.	«Ոստիկանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդվածի 2-րդ կետով գործող օրենքի 5-րդ հոդվածում լրացվող նոր 9-րդ մասի 1-ին նախադասությունից հանել «կառավարման» բառը, իսկ «տեղեկություններ» բառը փոխարինել «, ինչպես նաև իրավաբանական անձանց անձնական տվյալներ» բառերով:	Ընդունվել է: Կատարվել են համապատասխան փոփոխություններ:	
--	--	-----------	--	--	--